12929

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«29» 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0141-22

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Վարդան Թումանյան***
Ք.Երևան, Դեմիրճյան փ., 17ա, 22 բն.

Գործունեությունը՝ **Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հասցեում նախատեսվող հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Աբովյան համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0141-22

<29> 09 2022թ.

Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հասցեում նախատեսվող հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	Քաղաքացի Վարդան Թումանյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Պտղնի բնակավայր

Ներածական մաս. ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում, նախատեսվող ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի նախագիծը մշակվել է <<Պրոֆէներջի>> ՍՊԸ-ի կողմից, համաձայն նախագծային առաջադրանքի: Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր Վարդան Թումանյանի սեփականության իրավունքը հաստատող N 11082020-07-0162 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը և Պտղնի համայնքի կողմից 05.10.2020թ. տրամադրված N40 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Տարածքը գտնվում է M4 միջպետական ճանապարհին կից: Տարածքի կառուցապատված չէ, ունի փոքր թեքություն: Շինարարության ընդհանուր տևողությունը պետքե կազմի 7 ամիս:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3)-րդ կետի դ. ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամասի հասցեում նախատեսվող լիցքավորման կայանի կառուցման տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5000քմ, մուտքը և ելքը ապահովելու համար վարձակալման ենթակա մակերես՝ 550քմ, կառուցապատման մակերես՝ 3500քմ, կանաչապատման մակերես՝ 1500քմ, տարածքում նախատեսված է՝ հեղուկ գազի ստորգետնյա գազամբար V=5խմ, ընդունիչ, սնող

հեղուկ գազի պոմպ, հեղուկ վառելիք (դիզվառելիք) ստորգետնյա տարա V=16խմ, հեղուկ վառելիք ստորգետնյա տարա V=5 խմ, հեղուկ վառելիք ստորգետնյա տարա V= 5 խմ, ընդունիչ տարաներ 60լ, պահեստային տարաների վառելիքալցման կետ: Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, իրավունքի տեսակը սեփականություն:

Հայցվող տեղամասի կորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

1. Y =4458477.1997 X =8465810.1945
2. Y =4458506.9849 X =8465772.9895
3. Y =4458456.4618 X =8465746.2980
4. Y =4458418.2579 X =8465721.3059
5. Y =4458402.1210 X =8465742.4347
6. Y =4458389.7077 X =8465758.6880
7. Y =4458415.5987 X =8465781.5567

Ավտոմեքենաների լիցքավորման կայանը բաղկացած է օպերատորային շինությունից, կոմպրեսորային կայանից, ստորգետնյա հեղուկ վառելիքի պահեստներից, ավտոմեքենաների լիցքավորման կայանից, ծածկարանով, ջրի հակահրդեհային ստորգետնյա տարաներից, շանթարգելներից: Օպերատորային շինությունը իրենից ներկայացնում է 21.0x13.0 արտաքին չափերով 6,5մ բարձրությամբ միահարկ շինություն, որտեղ տեղաբաշխվելու են օպերատորի, տնօրենի սենյակները, սանհանգույցները նախատեսված տղամարդկանց և կանանց, հաշմանդամների համար, հանգստի և սննդի սենյակը, սպասասրահը: Օպերատորային շինության ներսի մաքուր բարձրությունը նախատեսված է 3.5մ: Տանիքը հարթ՝ արտաքին ջրահեռացմամբ: Ծածկարանը 32,5 x 8,00 մ առանցքային չափերով շինություն է 6,5մ բարձրությամբ: Նախագիծը կատարված է ՀՀ-ում գործող ՀՀՇՆ IV-12.03.01-04, (գազաբաշխիչ համակարգեր) ՇՆՁ IV-12.101-04, Գազաբաշխիչ համակարգերի նախագծում և շինարարություն, շինարարական նորմերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.08.2008 թ. (Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն և ՀՀ կառավարության 22.12.2005թ.: Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում Տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 2399-Ն որոշումների հիման վրա: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման և շահագործման ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 21-Ն հրամանի պահանջները:

Հողային աշխատանքների ծավալ՝ հանույթ, 2000խմ հետլիցք՝ 1200խմ: Ավալցուկ հողային զանգվածը կտեղափոխվի Աբովյան համայնքի հետ համաձայնեցված վայր: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Լցակայանի

ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը նախատեսվում է Երևան-Սևան մայրուղու հարեվանությամբ անցնող D=800մմ տրամագծի ջրատարից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շահագործման փուլում կայանում առաջացող կենցաղային կեղտաջրերը սանիտարական-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի ծավալը կազմում է 45խմ: Կապված լցվելու հաճախականությունից սեփտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 1320000 դրամ:

Ուսումնասիրվող տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Հայցվող տարածքի և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Կառուցման աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը,
- կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարան : Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,

- ըստ անհրաժեշտության նախատեսել շրջանցիկ ճանապարհ՝ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ երթևեկելի ճանապարհները չծանրաբեռնելու նպատակով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Վարդան Թումանյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հասցեում նախատեսվող հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան